Հավելված
Արդարադատության նախարարության
գլխավոր քարտուղարի
2022 թվականի նոյեմբերի 8-ի N 1727-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) հասարակական միավորումների գրանցման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիր՝ 12-34.2-Մ1-25):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կամ Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս 49/3:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է օրենքով սահմանված կարգով զանգվածային լրատվության միջոցների հաշվառման գործընթացը.

2. իրականացնում է կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, գործատուների միությունների, ինքնակարգավորվող կազմակերպությունների, այլ հասարակական միավորումների պետական գրանցում (լուծարման պետական գրանցում), դրանց կանոնադրությունների փոփոխությունների և պետական միասնական

գրանցամատյանում գրառվող տեղեկությունների փոփոխությունների պետական գրանցում.

3. իրականացնում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ոչ առևտրային իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների (բացառությամբ ՀՈԱԿ-ների, ՊՈԱԿ-ների, ոչ առևտրային կոոպերատիվների և Հայաստանի Հանրապետությունում գրանցված հիմնադրամների առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների) պետական հաշվառում (հաշվառումից հանում), դրանց կանոնադրությունների փոփոխությունների և պետական միասնական գրանցամատյանում գրառվող տեղեկությունների փոփոխությունների պետական հաշվառում.

4. իրականացնում է գրանցման գործընթացում լսումների անցկացման գործընթացը.

5. Որպես ներկայացուցիչ հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում և դատարաններում՝ Գործակալության գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքների քննման ժամանակ:

Իրավունքները՝

• լրատվության միջոցի պատասխանատուի ուշադրությունը հրավիրել թողարկված լրատվության միջոցում «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պահանջվող պայմանները ներառելու համար:

• պետական գրանցման (հաշվառման) գործընթացում համապատասխան մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր, տեղեկատվություն.

• համապատասխան շահագրգիռ մարմիններից կատարել անհրաժեշտ հարցումներ, ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, սահմանված կարգով ընդունել որոշումներ, ինչպես նաև փաստաթղթերի կազմման ծառայությունների համար դիմած անձանցից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն, նյութեր և փաստաթղթեր.

• Գործակալության գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքների քննման ժամանակ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում և դատարաններում Գործակալությունը և Բաժինը ներկայացնելիս դատական գործից ստանալ փաստաթղթերի պատճեններ, ներկայացնել լրացուցիչ ապացույցներ, ընդունված դատական ակտերի դեմ ներկայացնել

վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ:

Պարտականությունները՝

• իրականացնել պետական հաշվառման ներկայացված զանգվածային լրատվության միջոցի հաշվառում և առաջարկություն ներկայացնել Բաժնի պետին՝ օրենքը խախտողների նկատմամբ համապատասխան միջոցներ կիրառելու վերաբերյալ պետական լիազոր մարմին միջնորդություն ներկայացնելու, ինչպես նաև առանց համապատասխան հաշվառման զանգվածային լրատվության միջոց թողարկողներին, հրապարակողներին և տարածողներին օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

• սահմանված ժամկետում ուսումնասիրել պետական գրանցման համար ներկայացված անհրաժեշտ հիմքերի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին և իրականացնել պետական գրանցում (հաշվառում) կամ նախապատրաստել պետական գրանցումը (հաշվառումը) մերժելու պատասխանի նախագիծը՝ համապատասխան հիմնավորումներով և հղումներով օրենքների ու իրավական այլ ակտերի համապատասխան, ինչպես նաև պետական գրանցումը, պետական հաշվառումը հավաստելու համար պետական միասնական գրանցամատյանից տրամադրել համապատասխան քաղված:

• սահմանված ժամկետում ուսումնասիրել լուծարման գործընթացում գտնվելու և լուծարման պետական գրանցման, հաշվառումից հանման համար ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին և Բաժնի պետի համաձայնությամբ իրականացնել լուծարման գործընթացի, լուծարման պետական գրանցում և հաշվառումից հանում.

• որևէ անձի դիմումի կամ գործակալության համապատասխան որոշման հիման վրա գրանցման գործընթացում իրականացնել լսումներ, կազմել արձանագրություններ և գրանցման գործընթացում լսումներ իրականացնելու մասին որոշումը հրապարակման ներկայացնել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

• Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով մուտքագրել հասարակական միավորումների լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ոչ առևտրային իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների (բացառությամբ ՀՈԱԿ-ների, ՊՈԱԿ-ների, ոչ առևտրային կոոպերատիվների և Հայաստանի Հանրապետությունում գրանցված

հիմնադրամների առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների) հաշվառումից հանելու մասին տեղեկությունները.

• Օրենքով սահմանված կարգով և ժամկետում գործակալության պաշտոնական կայքում համընդհանուր իրազեկման նպատակով հրապարակման ներկայացնել գրանցվող կուսակցությունների կանոնադրությունները և ծրագրերը.

• համապատասխան մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրել խորհրդատվություն կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների պետական գրանցման գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների պետական գրանցման գործընթացի, պետական գրանցամատյանում և արխիվային փաստաթղթերում առկա տեղեկությունների վերաբերյալ,

• Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծառայությունների ցանկին և այդ ծառայությունների վճարների չափերին համապատասխան՝ իրականացնել Բաժնի կողմից կատարվող վճարովի ծառայությունների մատուցման գործընթացը՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն

5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ծառայությունների մատուցում
5. Բողոքների բավարարում
6. Ժամանակի կառավարում
7. Փաստաթղթերի նախապատրաստում

1. Կազմակերպական շրջանակը

4.1.Աշխատանքի կազմակերպական և ղեկավարման շրջանակը

Պատասխանատու է համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության արտաքին ներգործություն ունեցող վերջնարդյունքի համար:

4.2.Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում արտաքին ներգործության և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում:

4.3.Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության համապետական ազդեցություն:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5.Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: